«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ՝ Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացում

ՀԵՂԻՆԱԿ՝ Նարե Դավթյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ IV-Խումբ, Անգլերեն

ՂԵԿԱՎԱՐ Ռուզաննա Դալլաքյան

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆ.....5

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ.....11

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....13

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ.....14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ..... 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժների և հոգեբանների կարծիքով, առավել կարևոր է երեխաների մեջ տարբեր որակների և հատկությունների զարգացումը, որոնց օգնությամբ նրանք կկարողանան դրսևորել իրենց հետագա կյանքում, կենսագործունեության տարբեր ոլորտներում: Բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել: Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ:Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ըստ այս պարզաբանումների կարող ենք հասկանալ, որ ինքնուրույնությունը, ստեղծագործական կարողությունները և տարբեր հատկությունների և որակների զարգացումը փոխկապակցված են և ունեն նույն նպատակը՝ խթանելու անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում:

Ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է աշակերտների մեջ ինքնուրույնության և ստղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Սովորողները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծերից, հարազատներից և ուսուցիչներից, ովքեր շրջապատում են երեխային: Ինքնուրույնությունը տարրական դասարաններում բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված, աշակերտների մեջ սերմանել ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը: Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին՝ չվախենալով ուսման մեջ առկա դժվարություններից: Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման և զարգացման մեջ հսկայական է ուսուցչի դերը: Երեխաների

ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դասից դասաս, դասարանից դասարան: Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում ես իմ առջև նպատակ եմ դրել ուսումնասիրել աշակերտների ինքնուրույնության, ստեղծագործականության խթանման գործընթացի առանձնահատկությունները: Այս նպատակի իրացման համար վեր են հանվել և առաջադրվել են հետևյալ կարևոր խնդիրներ.

➢ Ուսումնասիրել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման հիմնական մանկավարժկան միջոցները

➢ Պարզել, թե ինչպես են ազդում ստեղծագործական խաղերը աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման վրա:

➢ Առանձնացնել այն խնդիրները և դժվարությունները, որոնք առաջանում են աշակերտների ինքնուրույնության խթանման գործում:

➢ Առաջարկել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման ժամանակակից միջոցներ և եղանակներ:

Այսպիսով, հավելենք, որ դպրոցում՝ աշակերտների ինքնուրույնության խթանման առաջնային նպատակն է աշկերտի անձի և նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այս նպատակի իրացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ, կիրառելով տարբեր մանկավարժական միջոցներ, ուսուցման մեթոդներ և այլն:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆ

Այժմ բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, այդ թվում նաև նկատվում է զարգացում կրթական համակարգում: Եվ անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն: Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է: Ինքնուրույնությունը, սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է:[1]

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ:Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը՝ մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

Երեխայի ինքնուրույն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել աշխատել ինքնուրույն: Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դրսևորվում դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց, այն նպաստում է ինքնուրույության ձևավորմանը: [2]

Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ՝

- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք

---

[1] Անձի ինքնիրացման հիմնախնդիրը: Ուսումնական ձեռնարկ / Վ. Ռ. Պապոյան, Է. Ա. Գրին, Ա. Ս. Գալստյան և ուրիշներ, -Եր.: ԵՊՀ հր., 2011, 102 է

բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:

- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:
- Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարարկարողությունները:

Այսպիսով, ամեն ինչի հիմքում ազատության գաղափարն է: Վստահել մարդուն և հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու: Պարտադիր ուսուցումը, ենթատեքստում ունի սովորողի հանդեպ անվստահության մտայնությունը, ինչը մարդուն զրկում է իր ամենացանկալի որակից՝ ինքնուրույնությունից, նաև աշխարհի հանդեպ կենդանի և ակտիվ հետաքրքրությունից:

Գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները զարգանում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:

Ինքնուրույնության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության և հետևաբար, նաև հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը: Սակայն, նման որակը դատարկ տեղում չի ձևավորվում. Հանրակրթական համակարգից պահանջվում է մշակել ինքնուրույնության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում աշակերտի ազատության սահմանները պիտի ավելի ընդարձակվեն: Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության պրոցեսում: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս, երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի: Եթե երեխան շատ թե քիչ խելացի է՝ կարող է լավ կատարել հանձնարարություններ, իսկ ահա ստեղծագործաբար աշխատել, խնդիր դնել, ծրագիր ու պլան կազմել և ինքնուրույն իրականացնել դրանք՝ ի վիճակի չէ. Նա չունի ինքն իր հանդեպ այդ վստահությունը: Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ ամեն մի հետքրքրություն: Չկա հետքրքրություն՝ չկա կայուն ուսումնական մոտիվացիա, որը հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու գլխավոր երաշխիքն է:

Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:

Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Ուսումնական աշխատանքները, որ կատարում է սովորողը դպրոցում կամ տանը, պետք է ունենան իրենց մեջ հետազոտական գործունեության տարրեր և այդօրինակ գործունեության չափաբաժինը կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում համապատասխան չափով ավելանա:

Ուսումնահետազոտական գործունեությունը ենթադրում է սովորողի ստեղծագործական ընդունակությունների արթնացում ու ակտիվացում: Ուսումնառությունը հետևողականորեն վերածելով ակտիվ ստեղծագործական աշխատանքի հանրակրթական դպրոցը դրանով իսկ պայմաններ կստեղծի այսպես կոչված ստեղծագործ (կրեատիվ) անձի ձևավորման համար, ինչը բոլոր ժամանակներում (և մեր ժամանակներում՝ առավել ևս) համարվել ու համարվում է

անձի ամենակարևոր որակը: Ստեղծագործական ակտիվության չափանիշներ կարող են համարվել ինտելեկտուալ նախաձեռնության դրսևորումը, օպտիմալ մոտիվացիայի առկայությունը, ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման մակարդակը, ինքնուրույնության դրսևորումը և ուսումնահիմացական գործունեության ինքնակազմակերպման ընդունակությունը:

Մանկավարժները հաճախ առարկում են, թե երեխան հասունացած չէ ինքնուրույնության համար և իրեն նվիրած ազատությունը կարող է չարաշահել՝ մատնվել անգործության: Այստեղ ճշմարտության մի աննշան բաժին կա: Բայց դպրոցի խնդիրն էլ հենց օգնելն է աշակերտին՝ գիտակցել ազատության ու պատասխանատվության դիալեկտիկան: Անառարկելի ճշմարտություն է, որ ազատությունը սովորում են գնահատել ազատ ապրելու պայմաններում, մտածել, պրոբլեմներ հաղթահարել սովորում են դրանք լուծելով, ինքնուրույնության սովորում են նման գործունեություն իրականացնելով, ի վերջո՝ մտածել սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:
2. բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել,

ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում, ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը: Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն: Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. հիմնական փուլ. Ալս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

6. ամփոփիչ փուլ.Այս փուլում կատարվում է անցուդարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

- ✓ Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի որ փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,
- ✓ ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը,

ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները: Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները և, վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Ի Ն Ք Ն ՈՒ Ր ՈՒ Յ Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կրտսեր դպրոցական տարիքը, մանկավարժների և հոգեբանների կարծիքով, առավել կարևոր է երեխաների մեջ տարբեր որակների և հատկությունների զարգացման համար, որոնց օգնությամբ նրանք կկարողանան դրսևորելիետագա կյանքում, կենսագործունեության տրբեր ոլորտներում: Այդպիսի որակներից են ստեղխծագործական ակտիվությունը, ինքնուրույնությունը, վստահությունը, պատասխանատվության զգացումը, համառությունը և այլն: Այս տարիքում երեխայի կայացման կարևոր ուղղություններից է ինքնուրույնության զարգացումը, որը մեծապես որոշում է երեխայի հաջող գործունեությունը հետագա կյանքում:

Ինքնուրույնությունը ձևավորվում է աստիճանաբար՝ երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում, ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ և դրսևորման ձևեր: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր տարիքային փուլում անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից համապատասխան չափաբաժիններով և ռացիոնալ կերպով՝ զարգացնելով անհրաժեշտ հմտություններ և կարողություններ երեխաների մեջ:

Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխյի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպովկարգավորում է սեփական վարքը և գործունեությունը: Վերջիններս, իրենց հերթին, դրսևորում են երեխայի կարողության մեջ՝ հաղթահարել դժվարությունները, որոնք հանդիպում են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին:

Կրտսեր դպրոցական տարիքու աշակերտը սովորաբար ունի դրական տրամադրվածություն շրջապատող իրականության հանդեպ, սիրում է խաղալ և երևակայել: Այս տարիքում երեխան, որպես կանոն, արդեն հակված է սեփական կարծիքը ունենալու, սակայ մեծի հեղինակությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ այդ կարծիքի ձևավորման և բզարգացման վրա: Այս ամենը անմիջականորեն ազդում է երեխայի և շրջակա իրականության միջև փոխազդեցությունների վրա: Գիտակցելով, որ ինքնուրույնությունը անձի կարևորագույն բաղդրիչներից մեկն է, բազմաթիվ ժամանակակիցգիտնականներ ուշադրությունեն կենտրոնացրել դրա էության ուսումնասիրության վրա: Իսկապես, ինքնուրույնության դաստիարակման խնդիրը ենթադրում է այդ ֆենոմենի հստակ սահմանում և դրա հատկանիշների առանձնացում:

Այսպես, ըստ Ս. Օժեգովի բառարանի, ինքնուրույն հասկացությունը ունի մի քանի սահմանումներ

➢ Անկախ, ազատ

➢ Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն

➢ Մյուսներից առանձնացված

➢ Ինքնուրույն ուժերով կատարվող գործունեություն՝ առանց կողմնակի օգնության և

ուղղորդման

➢ Կողմնակի ազդեցությունից անկախ

Զ. Շինտարը ինքնուրույնության ֆենոմենը սահմանում է , որպես անկախություն, անձի ձգտում և ունակություն, գործողություններ կատարել առանց շրջապատող անձանց օգնության:

Դառնալ ինքնուրույն և նախաձեռնող – օբյեկտիվ օբյեկտիվ անհրաժեշտություն է և յուրաքանչյուր երեխայի բնական պահանջ:Սակայն, ինքնուրույն գործելու ունակությունը չի բացառում կողմնակի օգնության հնարավորությունը և, նույնիսկ, ցանկալիությունը:

Ինքնուրույնությունը սահմանվում է ոչ միայն որպես ազատություն արտաքին ազդեցություններից և պարտադրանքներից, այլև որպս ընդունակություն հակազդել արտաքին ազդեցություններին և վերամշակել դրանք սեփական գիտակցության մեջ: Ըստ մանկավարժական հանրագիտարանային բառարանի ինքնուրույնությունը սահմանվում է որպես անձի առանցքային որակներից մեկը, որն արտահայտվում է կարողության մեջ նպատակներ սահմանել և սեփական ուժերով հասնել դրանց իրականացմանը: Միևնույն ժամանակ, ինքնուրույնության տակ ենթադրվում է անձի պատասխանատու վերաբերմունքը սեփական արարքների հանդեպ, ընդունակություն ցանկացած իրաիճակում գործել գիտակցված և նախաձեռնողական, կայացնել ոչ ավանդական և ոչ ստանդարտ որոշումներ:

Դ. Էլկոնին դիտարկում է ինքնուրույնությունը, որպես անձի ինտեգրալային հատկություն, որն արտացոլում է անձի կոգնիտիվ և կամային հատկանիշների միասնություն, ստեղծագործական և ակտիվ վերաբերմունք արտաքին աշխարհի հանդեպ: Առաջատար հոգեբաններ և մանկավարժներ Վ. Դավիդովի, Գ. Ցուկերմանի և այլոց կարծիքով կրտսեր դպրոցականների ինքնուրույնույունը և նախաձեռնողականությունը դասապրոցեսում առաջին հերթին արտահայտվում է կարողության և ընդունակության մեջ ինքնուույն մտածել, կողմնորոշվել նոր իրավիճակում, ինքնուրույն տեսնել խնդիրը և դրա լուծման ուղիները:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից: գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել: Տվյալ խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ստեղծագործականության խնդիրը տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից: Այսպես օրինակ, Ե. Տունիկը, ով զբաղվել է Է. Տրրնսի գիտական հայացքների խորին ուսումնասիրմամբ, ըստ վերջինիս հհայեցակարգի մեկնաբանում է ստեղծագործականույունը, որպես անձի ընդունակություն, որը մշտապես գտնվում է զարգացման գորշընթացում և կախված է բազմաթիվ ներքինև արտաքին պայմաններից, գործոններից :

Հեղինակն առանձնացնում է ստեղծագործականության հետևյալ չափանիշները.

➢ Մտքի սահունություն

➢ Մտքի ճկունություն

➢ Մտքի օրիգինալություն /յուրօրինակություն

➢ Մտքի մշակվածություն

Ն. Լեյտեսը նշում էր, որ ստեղծագործականությունը հզոր գործոն է հանդիսանում անձի զարգացման գործընթացում, որով բնութագրվում է տվյալ անձի պատրաստակամությունը փոխելու, հրաժարվելու կարծրատիպերից, ազդելու շրջակա իրականության վրա:

Այսպիսով, ստեղծագործականությունը սահմանվում է, որպես անձի ընդունակություն ծնելու նոր գաղափարներ գործունեության այս կամ այն ոլորտում, որոնք կնպաստեն առաջադրված խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծմանը: Այս ընդունակությունը կարող է արտահայտվել աձի մտածողության, ընկալման, երևակայության, էմոցիաների, ինչպես նաև իր գործունեության արդյունքների մեջ:

Հայտնի են նաև ստեղծագործականության և ինքնուրույնության որոշ տարիքային առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, Ա. Բելոուսովան կարծում է, որ վաղ մանկական տարիքում ստեղծագործականությն խթանման վրա մեծապես ազդում են էմոցիաները: Սակայն ստեղծագործական գործընթացի կարգավորման զգացմունքային, էմոցիոնալ հիմքի

առկայությունը դեռևս չի սպառում այս ֆենոմենի զարգացման մեխանիզմը երեխաների մոտ: Գոյություն ունեն նոր գաղափարների ստեղծման նաև այլ տեխնոլոգիաներ: Օրինակ, զարգացնող ուսումնառության հայեցակարգում ստեղծագործականգործընթացը կապվում է տեսական մտածողության հետ: Դպրոցում աշակերտների ստեղծագործականության խթանման գործու կարևոր նախապայման է մանկավարժի ներազդեցությունը նրանց մտածողության գործընթացի վրա: Այսպիսով, ստեղծագործականությունը աշակերտի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության և անձի առանձնահատկությունների, մտածողության առանձնահատկությունների հետ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Դպրոցում ուսուցչի աշխատաանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում 8 աշակերտների կրեատիվության, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը :

Դիտարկենք, որտեղ և ինչպես է առավել լիարժեք կերպով արտահայտվում և զարգանում կրտսեր դպրոցականների ինքնուրույնությունը և ստեղծագործականությունը՝ հիմնվելով հետազոտողի մանկավարժական փորձի և համապատասխան գործունեության ընթացքու արված եզրակացությունների վրա:

Ուսումնական գործընթացում կրտսեր դպրոցականի ինքնուրույնությանը, ստեղծագործականությանը և նախաձեռնողականությանը նպաստելու համար անհրաժեշտ է երեխային հնարավորություն տալ ինքնուրույն մտածել և արտայատլ սեփական տեսակետը այս կամ այն հրցի շուրջ:

Ուսուցիչները նաև պետք է ձգտեն որպեսզի աշակերտը ինքնուրույն կատարի ուսումնական առաջադրանքները, առանց կողմնակի օգնության: Մեծ նշանակություն ունեն ինքնուրույն աշխատանքները և ստեղծագործակա առաջադրանքները ուսումնական պրոցեսում: Ընդ որում, դրանց պարագայում օգնության աստիճանը կարող է կախված լինել կոնկրետ երեխայի առաջադիմությունից: Այսպես, օրինակ, մեկ աշակերտին խնդիրը լուծելու համար բավական է միայն կարդալ խնդրի տեքստը, մյուսին անհրաժեշտ է նաև այդ տեքստի համառոտագրությունը, իսկ երրերդ աշակերտին անհրաժետ է կազմել խնդրի լուծման հաջորդական պլան:

Կրտսեր դպրոցականների ինքնուրույնության զարգացմանը նպաստում է նաև արտադասարնյին ընթերցանությունների կազմակերպումը, որոնց պարագայում դպրոցականներըն ինքնուրույն են ծանոթանում ստեղծագործություններին, իսկ դասերի ժամանակ կամ արտադասարանային գործունեության ընթացքում ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը կարող է զարգանալ նքնորույն, ստեղծագործական առաջադրանքներ կատարելու ընթացքում, օրինակ, խաչբառերի լուծում, վիկտորինաների կազմակերպում և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ճանաչողական ինքնուրուն գործունեություն ծավալելու և ստեղծագործական ունակությունների զարգացման վրա ազդում են ինչպես տարերայնորեն և հատուկ նպատակային կազմակերպված, այպես էլ բնական և սոցիալական գործոններ: Բացառիկ ազդեցություն է ունենում նաև այն միջավայրը, ուր գտնվում է երեխան, և ուր նա իրեն դրսևորում է որպես ազատ, ինքնուրույն անձ՝ համագործակցելով այդ միջավայրի հետ: Այսպիսի գործունեության ծավալման ամենաարդյունավետ միջեցը խաղն է: Բազմաթիվ մանկավարժներ, հոգեբաններ գրել են, խոսել երեխաների խաղային գործունեության անհրաժեշտության մասին: Նրանք բոլորն էլ համարում են, որ խաղի միջոցով երեխային կարելի է և՛ կրթել, և՛ դաստիարակել:

Դիդակտիկ խաղերին կրտսեր դպրոցականների մասնակցությունը նպաստում է նրանց ինքնահաստատմանը, ինքնադրսևորմանը, ինքնահիրացմանը, տարբեր դրդապատճառներով պայմանավորված՝ դրանք ձևավորում են հաջողության, հաղթանակի հասնելու կայուն ձգտումներ, կամային որակներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հենվելով թեմատիկ մանկավարժական գրականության ուսումնասիրության, ինչպես նաև իմ մանկավարժական գործունեության ընթացքում ձեռք բերված փորձի վրա, կարող եմ եզրակացնել, որ կրտսեր դպրոցականների մոտ ինքնուրույնության և ստեղծագործակաունակությունների զարգացման համար կարևոր է, որպեսզի երեխաների համար ստեղծվն սովորելու բարենպաստ պայմաններ, որոնց պարագայում նրանք հնարավորություն կունենան ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, գտնել խնդիրների լեւծումներ, հաղթահարել ուսումնառության ընթացքու հանդիպած դժվարությունները:

Այն աշակերտները, որոնց մեջ մանկավարժական հաջող գործունեության ընթացքում ձևավորվում են ինքնուրույնության հակումները, որպես կանոն, բավական մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ուսման հանդեպ, մծտապես ձգտում են նոր գիտելիքներ ստանալ, վերլուծություններ և մտահանգումներ կատարել: Այսպիսի աշակերտները ևս կարող են բազմաթիվ սխալներ կատարել իրենց ուսումնառության ընթացքում, սակայն նրանց առավելությունը կայանում է նրանում, որ կատարած սխալներից այս աշակերտները չեն հուսահատվում և փորձում են ուղղել այդ սխալներ:

Աշակերտի մեջ ինքնուրույնության ը նախաձեռնողականության զգացումը զուգորդվում է նաև ինքնավերահսկողության և կամային հատկանիշների զարգացմամբ:

Այս համատեքստում կարևոր և առանցքային է նաև մանկավարժի դերը: Նրա խնդիրն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, որի պարագայում աշակերտները հետաքրքրված և շահագրգռված կլինեն ուսումնական գործընթացով, կձգտեն ակտիվության և նախաձեռնողականության, ինչպես նաև ընդհանուր ինքնուրույնության: Դրա համար մնկավարժը կարող է կիրառել ուսումնական գործունեության կազմակերպման նորագույն մեթոդները, տեղեկատվական տեխնոլոգիաները, աշակերտների հետ աշխատանք կատարելու անհատական և խմբակային ձևեր, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքներ և այն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անձի ինքնիրացման հիմնախնդիրը: Ուսումնական ձեռնարկ / Վ. Ռ. Պապոյան, Է. Ա. Գրին, Ա. Ս. Գալստյան և ուրիշներ, -Եր.: ԵՊՀ հր., 2011, 102 էջ
2. Հեքիաթաթերապիայի տեսություն և պրակտիկա: ուսումնական ձեռնարկ / Ղազարյան Գ. Հ., Գալստյան Ա. Ս., Մուրադյան Ե. Բ. -Եր.: Հեղ. հրատ., 2015թ. 84 էջ:
3. Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում (հեղ. Ավանեսյան Հ., Պապոյան Վ., Գալստյան Ա. և ուրիշներ), Երևան, 2009, էջ 19-35
4. Մասնագիտական ինքնորոշման և կայացման հոգեբանական ուղղորդումը կրթական համակարգում // նյութերի ժողովածու, հեղ. Վ. Պապոյան, Ա. Գալստյան, Ե. Մուրադյան, Դ. Սարգսյան // Եր., ԵՊՀ հրատ., 2015, 76 էջ
5. Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Երիտասարդ մասնագետների ինքնիրացման հոգեբանական առանձնահատկությունները, Բանբեր Երևանի պետական համալսարանի, 131,4, Երևան, 2010 էջ 50-56
6. . Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ
7. https://lib.armedu.am/category/56
8. https://usum.am/load/ashakertneri_inqnowrowyn_gorcowneowtyan_kazmakerpman_d_ ery/128-1-0-3575

.